



EaP | Eastern
Partnership

**Արևելյան գործընկերությունը՝
2020 թվականից հետո:
Ճկունության ամրապնդում.
Արևելյան գործընկերություն, որն
ապահովում է բոլորին**

#strongertogether

2009 թվականին մեկնարկելով որպես համատեղ քաղաքական նախաձեռնություն՝ Արևելյան գործընկերությունը (ԱԳ) նպատակ ունի խորացնել և ամրապնդել հարաբերությունները Եվրոպական միության (ԵՄ), Նրա անդամ պետությունների ու իր վեց արևելյան հարևանների՝ Հայաստանի, Ադրբեջանի, Բելառուսի, Վրաստանի, Մոլդովայի Հանրապետության և Ուկրաինայի միջև:

2019 թվականին, երբ նշվում էր գործընկերության 10-ամյակը, Եվրոպական հանձնաժողովը լայն և ընդգրկուն խորհրդակցություն անցկացրեց՝ քաղաքականության հետագա նպատակները սահմանելու համար: Ընդհանուր առմամբ, կա համաձայնություն, որ Արևելյան գործընկերությունը հուսալի է և շոշափելի օգուտներ է ապահովում տարածաշրջանի քաղաքացիների առօրյա կյանքում:

2020 թվականից հետո ԵՄ-ն, Նրա անդամ պետություններն ու գործընկեր երկրները **քաղաքականության հինգ նպատակադրումների** միջոցով միասին կաշխատեն ճկունության՝ որպես քաղաքականության գերակա շրջանակի ամրապնդման ուղղությամբ:

Գործընկերություն, որը ԱՏԵՂՃՈՒՄ Է

Տնտեսության ամրապնդումը կարևոր նշանակություն ունի քաղաքացիների սպասելիքների բավարարման, **անհավասարության նվազեցման** և գործընկեր երկրներն այնպիսի վայրեր դարձնելու համար, որտեղ մարդիկ կցանկանան կառուցել իրենց ապագան: ԵՄ-ի և ԱԳ-ի, ինչպես նաև հենց գործընկեր երկրների միջև **ամուր փոխադարձ** կապերը տնտեսական զարգացման, տարածաշրջանային ինտեգրման, առևտրի և շարժունակության կարևոր խթան են: **Նպատակն է՝ ստեղծել պատշաճ աշխատատեղեր և տնտեսական հնարավորություններ՝** բարեկեցություն ապահովելով գործընկեր երկրներում ապրող մարդկանց համար:

Ի՞նչ է լինելու հաջորդիվ

ԵՄ-ն և գործընկեր երկրները միասին աշխատելու են, որպեսզի կառուցեն ճկուն, կայուն և ինտեգրված տնտեսություններ:

- ✓ **առևտրի** ծավալների ավելացում և **տնտեսությունների** հետագա տարածաշրջանային ու երկկողմ **ինտեգրում**
- ✓ Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտիներով ասոցացման համաձայնագրերի և այլ **առևտրային համաձայնագրերի** լիարժեք իրականացման վրա կենտրոնացում՝ առավելագույն օգուտներ ստանալու նպատակով
- ✓ կառուցվածքային բարեփոխումների համար ավելի ուժեղ ազդակների ապահովում, **ֆինանսական միջոցների մատչելիության** բարելավում և աջակցություն **ՓՄՁ-ներին, մասնավորապես՝ կին և երիտասարդ ձեռնարկատերերին՝** աճը և ներդրումները խթանելու նպատակով
- ✓ փոխադարձ կապերի ամրապնդում՝ ֆիզիկական **կապի և ենթակառուցվածքների** (տրանսպորտի, էներգետիկայի և թվային ոլորտներում) ուղղությամբ ավելի շատ ներդրումների միջոցով
- ✓ **մարդկանց ուղղությամբ ներդրումների իրականացման** շարունակում՝ շեշտը դնելով երիտասարդների վրա
- ✓ **կրթության, գիտության և նորարարությունների** ոլորտների ու մասնավոր հատվածի կարիքների միջև կապի բարելավում

Գործընկերություն, որը ՊԱՇՏՊԱՆՈՒՄ Է

Լավ կառավարումը և ժողովրդավարական հաստատությունները, **օրենքի գերակայությունը**, հաջողված **հակակոռուպցիոն քաղաքականությունները**, **կազմակերպված հանցավորության դեմ պայքարը**, **մարդու իրավունքների** և անվտանգության հարգանքը, այդ թվում՝ **հակամարտությունից տուժած բնակչությանն աջակցության ցուցաբերումը** շուկայական տնտեսության գործառնության և կայուն աճի կարևոր նախապայմաններն ու ուժեղ և ճկուն պետությունների ու հասարակությունների ողնաշարն են:

Ի՞նչ է լինելու հաջորդիվ

ԵՄ-ն և գործընկեր երկրները կվերահաստատեն գործընկերության հիմնարար արժեքներին՝ հաստատությունների հաշվետվողականությանը, օրենքի գերակայությանը և անվտանգությանն իրենց հավատարմությունը:

- ✓ **դատական բարեփոխումների** ազդեցության չափման ավելի լավ ուղիների առաջարկում
- ✓ օժանդակության վերաբերյալ որոշում կայացնելիս **օրենքի գերակայության** ուղղությամբ բարեփոխումների առաջընթացի հաշվի առնում: ԵՄ-ի՝ խթանման վրա հիմնված մոտեցումից կշարունակեն օգտվել այն գործընկեր երկրները, որոնք առավել ներգրավված են բարեփոխումային գործընթացներում
- ✓ **տնտեսական հանցագործությունների և կոռուպցիայի դեմ պայքարում** ԵՄ աջակցության ակտիվացում
- ✓ ԵՄ քաղաքացիական պաշտպանության մեխանիզմի հետ համագործակցության շարունակում՝ **տարերային և տեխնաժին աղետների** կանխարգելումը, պատրաստվածությունն ու արձագանքումը բարելավելու նպատակով
- ✓ **անվտանգության շուրջ երկխոսությունների և համագործակցության** ուղղությամբ աջակցության ավելացում

Գործընկերություն, որ ԿԱՆԱԶԵՏՆՈՒՄ Է

Եվրոպայի «Կանաչ գործարքը» հասկացնել է տալիս, որ շրջակա միջավայրին և կլիմային առնչվող մարտահրավերները հրատապ գործողություններ են պահանջում ԵՄ-ի և գործընկեր երկրների կողմից: Զգտելով **կլիմայական չեզոքության**՝ ԵՄ-ն և գործընկեր երկրները համատեղ պատասխանատվություն են կրում Փարիզի համաձայնագրի շրջանակներում իրենց ազգային հանձնառությունների կատարման և սեփական տնտեսությունների արդիականացման համար՝ նվազեցնելով իրենց ածխածնի հետքը:

Ի՞նչ է լինելու հաջորդիվ

ԵՄ-ն և գործընկեր երկրները միասին կաշխատեն ճկուն և կայուն ապագայի ուղղությամբ.

- ✓ Տարածաշրջանի վերածում ժամանակակից, ռեսուրսարդյունավետ, մաքուր, շրջանաձև և մրցունակ տնտեսություններով արդար ու բարգավաճ հասարակությունների՝ միաժամանակ բարելավելով դրանց **բնապահական և կլիմայական գործողությունները**, այդ թվում՝ բնական պաշարների առավել կայուն օգտագործման միջոցով
- ✓ **Նոր «կանաչ» աշխատատեղերի և «կանաչ» անցման** հետ կապված տնտեսական հնարավորությունների ստեղծում
- ✓ **Էներգիայի տեղական և վերականգնվող աղբյուրների** զարգացում և այդպիսով կենսաբազմազանության կորստի դադարեցում
- ✓ **բնապահական և կառավարման** և իրազեկվածության բարձրացման ուղղությամբ ներդրումների շարունակում, այդ թվում՝ քաղաքացիական հասարակության հետ ջանքերի մեկտեղման միջոցով
- ✓ **կայուն և խելացի շարժունակության** անցման արագացում
- ✓ **մարդկանց առողջության և բարեկեցության համար** վճռական նշանակության ոլորտներում գործողությունների ակտիվացում

Գործընկերություն, որ ԿԱՊ Է ԱՊԱՅՈՎՈՒՄ

Տվյալների վրա հիմնված ժամանակակից տնտեսությունը լիարժեք կերպով կարող է իրացվել միայն այն դեպքում, երբ քաղաքացիները և բիզնեսները բարձրորակ էլեկտրոնային հաղորդակցության ենթակառուցվածքների ու մատչելի սակագներով ծառայությունների հասանելիություն ունեն: **Եվրոպայի թվային ապագայի ձևավորման ռազմավարությունը** ԵՄ հարևանության տարածքում ուժեղ թվային ներկայության պահանջ է դնում՝ աճի ապահովման և կայուն զարգացման խթանման համար:

Ի՞նչ է լինելու հաջորդիվ

ԵՄ-ն կշարունակի ներդրումներ կատարել գործընկեր երկրների թվային տրանսֆորմացիայի գործընթացում և կձգտի ընդլայնել միասնական թվային շուկայի առավելությունները.

- ✓ օժանդակություն անվտանգ և շատ բարձր հզորությամբ գիգաբիտային **լայնաշերտ կապի** ընդլայնմանը, մասնավորապես՝ հեռավոր կամ առավել նոսր բնակեցված շրջաններում, ինչպես նաև մատչելի գներով ծառայությունների ապահովում
- ✓ աջակցություն գործընկեր երկրների միջև և, ըստ անհրաժեշտության, ԵՄ-ի հետ **ռոումինգի և սպեկտրի** համաձայնագրերի իրականացմանը
- ✓ ԱԳ տարածաշրջանում **էլեկտրոնային կառավարման** ամրապնդում պետական մարմինների արդյունավետությունը, թափանցիկություն և հաշվետվողականությունը բարձրացնելու և բարեփոխումներին նպաստելու համար
- ✓ գերնորարարական թվային **ստարտափներին** ուղղված աջակցության ավելացում և դրանց անդրասահմանային գործարար համագործակցության խթանում
- ✓ գործընկեր երկրների **կիբերանվտանգության** ուղղված օժանդակության և աջակցության շարունակում

Գործընկերություն, որը ՀՈՐԱՑՆՈՒՄ Է

Թափանցիկ, քաղաքացիակենտրոն և հաշվետու պետական կառավարման մարմինները, ազատ և արդար ընտրությունները Եական նշանակություն ունեն ժողովրդավարության համար: Դրանք ճկուն, արդար, ներառական և ժողովրդավարական հասարակությունների հիմնական բաղադրիչներն են՝ **ակտիվ քաղաքացիական հասարակության, ազատ, բազմակարծիք և անկախ լրատվամիջոցների ու պաշտպանված քաղաքացիական իրավունքների** հետ մեկտեղ:

Ի՞նչ է լինելու հաջորդիվ

ԵՄ-ն և գործընկեր երկրները միասին աշխատելու են ճկուն, արդար և ներառական հասարակությունների կառուցման ուղղությամբ.

- ✓ իշխանությունների կողմից որոշումների կայացման գործընթացում **քաղաքացիների ներգրավման** ապահովում՝ ժողովրդավարական համակարգերին աջակցելու և քաղաքացիների կողմից գիտակցված ընտրության հնարավորություն ստեղծելու նպատակով
- ✓ **հասարակական կազմակերպություններին**, հատկապես՝ արմատաբուխ կազմակերպություններին ու երիտասարդությանը հետագա աջակցության ցուցաբերում՝ քաղաքականության մշակման գործընթացում լիարժեք ներգրավման և բարեփոխումների ու հանրային հաշվետվողականության խթանման նպատակով
- ✓ բարենպաստ **լրագրողական միջավայրի** և անկախ լրագրողների խթանում՝ ճշգրիտ և փաստերի վրա հիմնված տեղեկատվության մատչելիության ապահովման նպատակով
- ✓ սոցիալական, տնտեսական և քաղաքական **ներառականության խթանում բոլորի**, այդ թվում՝ կանանց, երեխաների, փոքրամասնությունների ներկայացուցիչների և հակամարտությունների հետևանքով տուժածների համար
- ✓ **շարժունակության** և անվտանգ ու լավ կառավարվող միջավայրում մարդկանց միջև շփումների ապահովում, ինչպես նաև խոցելի միգրանտներին և փախստականներին աջակցության ցուցաբերում

